ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ ՔԾԽ ԱՊՁԲ-02»

ք. Երևան << 03>> փետրվարի 2017թ.

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս խորհրդի աշխատակազմի ղեկավար Ս. Յազերյանի, որը գործում է խորհրդի կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «Գնորդ», մի կողմից, և «Մագնատէս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 898700 (ութ հարյուր ինսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3-օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը[1]:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:*

[2] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.9 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	«Մագնատէս» ՍՊԸ
ք. Երևան Տերյան 89	ք. Երևան, Արշակունյաց-51, բն 14
Կենտրոնական գանձապետարանի	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2470103134080000
ՀՀ 900011522092	ՀՎՀՀ 02258158
ՀՎՀՀ [illegible]	էլ. հասցեն՝ magnatess@yahoo.com
	հեռ. (099) 445776
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«03» փետրվարի 2017թ. կնքված
N «ՀՀ ՔԾԽ ԱՊՁԲ-02» ծածկագրով
գնման պայմանագրի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Ձեռքբերվող գնման առարկայի նկարագիրը
1.	ձեռնոցներ	Կենցաղային, ռետինե , L չափի
2.	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ սև կամ գունավոր, աղբը հավաքելու համար, 30 լ տարողությամբ
3.	սոսինձ, էմուլսիա	Սոսինձ պոլիվինիլացիտատային /էմուլսիա/
4.	սիլիկոնե քսուկներ	Մոդիֆիկացված բիտումի հիմքով պլաստիկ հերմետիկ՝ նախատեսված մակերևույթների պրոֆեսիոնալ վերանորոգման, հերմետիկացման և սոսնձման համար: Նախատեսված տանիքների մետաղական թիթեղների ճեղքերը լցնելու համար: Փաթեթավորումը՝ 300 մլ
5.	մարտկոց, AAA տեսակի	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AAA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով
6.	մարտկոց, AA տեսակի	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AA ալկալիական,առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով
7.	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 100 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի
8.	ցերեկային լամպ 60սմ	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U-ձև, G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 60 սմ երկարությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված 'Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի'
9.	ցերեկային լամպ 120սմ	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ, օղակաձև կամ U- ձև, G-13 տիպի լամպակոթով, 20, 25, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականությամբ, 120 սմ՝: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"
10.	լամպերի դրոսելներ	Լամպերի դրոսելներ նախատեսված 4 հատանոց ցերեկային լամպերի համար, 40W, 220V, 0.42A 50HZ հզորությամբ
11.	մեկուսիչ ժապավեն,օղակաձև	Հոսանքի մեկուսացման համար տարբեր երկարության և լայնության գլանափաթեթ-ներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի

12.	վարդակ երկբևեռանի	220 Վ լարման, 16 Ա հզորության, երկու միացման և հողանցման լատունե զսպանակավորված կոնտակտներով, արտաքին դետալները՝ կարբոնապլաստմասսայե, ներքին մոնտաժի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի
13.	էլեկտրական երկարացման լար	Չափսը: 3տ 5 մ կամ 3տ 10 մ: 110 Ա, 250 Վ միացման մանրակներով , ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեք: Անվտանգությունն՝ ըստ ԳՕՍՏ 12.2.007.0-75 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"
14.	խրոց սովորական	Էլեկտրական խրոց 6,3/10 Ա, 250 Վ, ԳՕՍՏ Ռ 51322.1-99 և ԳՕՍՏ 7396.1-89, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և ԳՕՍՏ 12.2.007.0-75
15.	զուգարանի թուղթ, ռուլոնով	Երկշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"
16.	մեկանգամյա օգտագործման բաժակներ	Մեկանգամյա օգտագործման բաժակներ պլաստմասսայե, մեծ չափի, բարձրությունը 8սմ, տրամագիծը՝ ներքևում 4.5 սմ, վերևում 7սմ, սպիտակ գույնի: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված "Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի"
17.	թղթե անձեռոցիկ, երկշերտ	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի"
18.	թղթե անձեռոցիկ, երկշերտ	Անձեռոցիկ սեղանի՝ երկշերտ, թղթի 1 մ2 մակերեսի զանգվածը՝ 20 գ, խոնավությունը՝ 7,0 %, 70 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Սելպակ(Selpak) կամ համարժեք: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանա-

19.	ուղղահայաց շերտավարագույր	Ուղղահայաց, հատուկ մշակված կտորից կամ պոլիմերային նյութերից, ալյումինե քիվով, երկու կողմից հավաքովի:
20.	փոշու հավաքման կտորներ	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից
21.	հոտազերծիչ, օդի	Փակ սենյակի հոտի թարմացման համար, վակումային բալոնիկով, տարբեր բուրմունքներով
22.	կահույքի փայլեցման միջոց	Հատուկ հեղուկ, կահույքը փայլեցնելու համար
23.	օճառ, ձեռքի	Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Չեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը:
24.	օճառ, հեղուկ	Մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսամզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել՝ 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունակությունը՝ ոչ ավել 0,5 %-ից, փրփրագոյացնող հատկությունը՝ ոչ պակաս 300 սմ^3-ից, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված <<Մակե-ևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի>>
25.	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	Հատուկ ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)
26.	սպունգ, աման լվանալու	Ուղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական կտորով:
27.	զուգարանների մաքրման նյութեր	Զուգարանների մաքրման համար նախատեսված նյութեր
28.	ապակի մաքրելու միջոց	Հատուկ հեղուկ նախատեսված ապակիներ մաքրելու համար, հակաալերգիկ
29.	կահույքի մաքրելու լաթ	Փափուկ լաթ նախատեսված կահույք մաքրելու համար
30.	հատակի լվացման լաթ	Փափուկ լաթ նախատեսված հատակ մաքրելու համար
31.	հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)	Հատակ մաքրելու համար նախատեսված հեղուկ (խտանյութ)

32.	ավել, սովորական	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500)գրամ, երկարությունը (85-90)սմ, ավլող մասի լայնքը (35-40)սմ:
33.	տանիքի նյութեր	Մածիկային տանիքանյութեր պոլիմերներով մոդիֆիկացված բիտումային և ձյութի մածիկների խառնուրդ՝ նախատեսված որպես պաշտպանիչ շերտ մետաղական, փայտյա և պլաստիկ մակերեսների համար:
34.	ռետինե խողովակ 2, 3/4"	Կանաչապատ տարածքները ոռոգելու համար, 3/4"- չափի:
35.	ջրի ծորակ, փական	Տարբեր չափերի, խառնիչային տիպի:
36.	դռան փականներ	Նախատեսված մուտքի դռան համար ամուր մետաղից, արծաթագույն, բարձրությունը 26սմ
37.	զսպանակներ	Զսպանակ (շվեցար), նախատեսված մուտքի փայտե դռան համար, դռան քաշը՝ 50 կգ, արծաթագույն, ամուր մետաղից:
38.	կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	Երկարությունը 582մմ, լայնությունը 80մմ, խորությունը 95մմ, քաշը 1.35կգ, ջրի քանակը 0.44լ, ջրի թույլատրելի ջերմաստիճանը 110^{0}C
39.	կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	Նախատեսված ջեռուցման համակարգի ռադիատորի մասեր / փականներ, միջնորմներ, դրանց հետ կապված այլ մասեր:

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀՎՀՀ 01541632

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

«Մագնատէս» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-51, բն 14
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470103134080000
ՀՎՀՀ 02258158
էլ. հասցեն՝ magnatess@yahoo.com
հեռ. (099)445776

/ստորագրություն/

Հավելված N 2
«03» փետրվարի 2017թ. կնքված
N «ՀՀ ՔՇԽ ԱՊՁԲ-02» ծածկագրով
գնման պայմանագրի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ՀՀ	Գնման առարկայի			Նախատեսվում է գնել 2017 թվականին								Ընդամենը	
				2017 ԹՎԱԿԱՆ									
	Անվանումը	Չ/Մ	Միավորի գինը	1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ			
				քանակը	գումարը	քանակը	գումարը	քանակը	գումարը	քանակը	գումարը	քանակը	գումարը
1	2			3	4	5	6	7	8	9	10		
1.	ձեռնոցներ	զույգ	350			20	7000					20	7000
2.	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	հատ	10			1000	10000					1000	10000
3.	սոսինձ, էմուլսիա	կգ	900			3	2700					3	2700
4.	սիլիկոնե քսուկներ	հատ	1700			10	17000					10	17000
5.	մարտկոց, AAA տեսակի	հատ	100	50	5000							50	5000
6.	մարտկոց, AA տեսակի	հատ	100	50	5000							50	5000
7.	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	հատ	100	400	40000							400	40000
8.	ցերեկային լամպ 60սմ	հատ	400			25	10000					25	10000
9.	ցերեկային լամպ 120սմ	հատ	500			5	2500					5	2500
10.	լամպերի դրոսելներ	հատ	2700			10	27000					10	27000
11.	մեկուսիչ ժապավեն,օղակաձև	հատ	280			10	2800					10	2800
12.	վարդակ երկբևեռանի	հատ	500			10	5000					10	5000
13.	էլեկտրական երկարացման լար	հատ	1700			6	10200					6	10200
14.	խրոց սովորական	հատ	250			20	5000					20	5000

15.	զուգարանի թուղթ, ռուլոնով	հատ	100	400	40000					1100	110 000	1500	150000
16.	մեկանգամյա օգտագործման բաժակներ	հատ	10			3000	30000					3000	30000
17.	թղթե անձեռոցիկ, երկշերտ	հատ	400			20	8000					20	8000
18.	թղթե անձեռոցիկ, երկշերտ	հատ	105	80	8400	220	23100					300	31500
19.	ուղղահայաց շերտավարագույր	մ^2	7000					30	210000			30	210000
20.	փոշու հավաքման կտորներ	հատ	100			50	5000					50	5000
21.	հոտազերծիչ, օդի	հատ	350			10	3500					10	3500
22.	կահույքի փայլեցման միջոց	հատ	600			5	3000					5	3000
23.	օճառ, ձեռքի	հատ	300			10	3000					10	3000
24.	օճառ, հեղուկ	լ	450			50	22500					50	22500
25.	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	հատ	500			5	2500					5	2500
26.	սպունգ, աման լվանալու	հատ	100			30	3000					30	3000
27.	զուգարանների մաքրման նյութեր	հատ	900							20	18000	20	18000
28.	ապակի մաքրելու միջոց	հատ	800			5	4000					5	4000
29.	կահույքի մաքրելու լաթ	հատ	250							10	2500	10	2500
30.	հատակի լվացման լաթ	հատ	350							30	10500	30	10500
31.	հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)	հատ	500			10	5000					10	5000

32.	ավել, սովորական	հատ	800			10	8000					10	8000
33.	տանիքի նյութեր	հատ	1500							4	6000	4	6000
34.	ռետինե խողովակ 2, 3/4"	մ	700							50	35000	50	35000
35.	ջրի ծորակ, փական	հատ	6000					2	12000			2	12000
36.	դռան փականներ	հատ	10000							2	20000	2	20000
37.	զսպանակներ	հատ	13000							3	39000	3	39000
38.	կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	հատ	5500							20	110000	20	110000
39.	կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	հատ	1500							5	7500	5	7500
Ընդամենը					98400		219 800		222 000		358 500		**898 700**

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀՎՀՀ 01541632

Գլխավոր քարտուղար

ՎԱՃԱՌՈՂ

«Մագնատէս» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-51, բն 14
«Արդշինբանկ» ՓԲԸ.
Հ/Հ 2470103134080000
ՀՎՀՀ 02258158
էլ. հասցեն՝ magnatess@yahoo.com
հեռ. (099)44 47 6

Տնօրեն

Հավելված N 3
«03» փետրվարի 2017թ. կնքված
N «ՀՀ ՔԾԽ ԱՊՁԲ-02» ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ եռամսյակների՝ ընդ որում				
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը տարի
1	ձեռնոցներ	-	100%	100%	100%	100%
2	պոլիէթիլենային պարկ, աղբի համար	-	100%	100%	100%	100%
3	սոսինձ, էմուլսիա	-	100%	100%	100%	100%
4	սիլիկոնե քսուկներ	-	100%	100%	100%	100%
5	մարտկոց, AAA տեսակի	100%	100%	100%	100%	100%
6	մարտկոց, AA տեսակի	100%	100%	100%	100%	100%
7	էլեկտրական լամպ, 60W, 80W, 100W	100%	100%	100%	100%	100%
8	ցերեկային լամպ 60սմ	-	100%	100%	100%	100%
9	ցերեկային լամպ 120սմ	-	100%	100%	100%	100%
10	լամպերի դրոսելներ	-	100%	100%	100%	100%
11	մեկուսիչ ժապավեն,օղակաձև	-	100%	100%	100%	100%
12	վարդակ երկբևեռանի		100%	100%	100%	100%
13	էլեկտրական երկարացման լար	-	100%	100%	100%	100%
14	խրոց սովորական	-	100%	100%	100%	100%
15	զուգարանի թուղթ, ռուլոնով	27%	-	-	73%	100%
16	մեկանգամյա օգտագործման բաժակներ	-	100%	100%	100%	100%
17	թղթե անձեռոցիկ, երկշերտ	-	100%	100%	100%	100%
18	թղթե անձեռոցիկ, երկշերտ	27%	73%	100%	100%	100%
19	ուղղահայաց շերտավարագույր	-	-	100%	100%	100%
20	փոշու հավաքման կտորներ	-	100%	100%	100%	100%
21	հոտազերծիչ, օդի	-	100%	100%	100%	100%
22	կահույքի փայլեցման միջոց	-	100%	100%	100%	100%
23	օճառ, ձեռքի	-	100%	100%	100%	100%
24	օճառ, հեղուկ	-	100%	100%	100%	100%
25	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	-	100%	100%	100%	100%
26	սպունգ, աման լվանալու	-	100%	100%	100%	100%
27	զուգարանների մաքրման նյութեր	-	-	-	100%	100%
28	ապակի մաքրելու միջոց	-	100%	100%	100%	100%

	կահույքի մաքրելու լաթ	-	-	-	100%	100%
30	հատակի լվացման լաթ	-	-	-	100%	100%
31	հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)	-	100%	100%	100%	100%
32	ավել, սովորական	-	100%	100%	100%	100%
33	տանիքի նյութեր	-	-	-	100%	100%
34	ռետինե խողովակ 2, 3/4"	-	-	-	100%	100%
35	ջրի ծորակ, փական	-	-	100%	100%	100%
36	դռան փականներ	-	-	-	100%	100%
37	զսպանակներ	-	-	-	100%	100%
38	կենտրոնացված ջեռուցման ռադիատորներ	-	-	-	100%	100%
39	կենտրոնացված ջեռուցման ռադիատորների մասեր	-	-	-	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհուրդ
ք. Երևան Տերյան 89
Կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
ՀՀ 900011522092
ՀՎՀՀ 01541632

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

«Մագնատէս» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-51, բն 14
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470103134080000
ՀՎՀՀ 02258158
էլ. հասցեն՝ magnatess@yahoo.com
հեռ. (099)445776

/ստորագրություն/

Հավելված 4
2017թ. կնքված
« » » ծածկագրով
N « գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2017թ. կնքված
N « » ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախնագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն